Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2008 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 20.05.2008թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրված N0009 արտոնագրային համարով:

Ընկերությունը 11.06.2013թ. ստացել է նաև ոչ կյանքի վերաապահովագրության լիցենզիա (համար 0004) և 2014թ. կնքել է վերաապահովագրության պայմանագրեր:

Ընկերությունը զբաղվում է ընդհանուր ապահովագրական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ավտոտրանսպորտային միջոցների, փոխադրվող բեռների, հրդեհների և բնական աղետների, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ընդհանուր պատասխանատվության, ֆինանսական վնասների և արտասահման մեկնողների ապահովագրություն: 2010թ.-ից սկսած Ընկերությունն անդամակցում է ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության Բյուրոին, և կնքում է նշված բնույթի ապահովագրական պայմանագրեր:

Ընկերության գլխավոր գրասենյակը և մասնաճյուղերը գտնվում են Երևան քաղաքում և ՀՀ մարզերում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հյուսիսային պողոտա 1, 0001, Երևան, ՀՀ:

<u>Կառավարման մարմինները.</u>

Ընկերության կառավարման մարմիններն են՝

Բաժնետերերի Ընդհանուր ժողովը,

Ընկերության Խորհուրդը,

Գործադիր Տնօրենը:

Ընկերության Գործադիր Տնօրենն է Գագիկ Գրիգորյանը:

Ընկերության խորհուրդը կազմված է 5 անդամից:

Ընկերության խորհրդի կազմը 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

Դանիել Խաչատուրով - Խորհրդի նախագահ

Արա Գասպարյան - Խորհրդի անդամ

Ռաֆայել Մինասբեկյան – Խորհրդի անդամ

Ալխաս Սանգուլիա - Խորհրդի անդամ

Սոնա Դալալյան –Խորհրդի անդամ

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ:

Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1 Համապատասխանությունը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

3.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը դա այն հինական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Խմբի կողմից նոր ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2014թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍԽ») և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից:

ՀՀՄՍ 32 (Փոփոխություն), Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են կիրառման ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.

- «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը՝. փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության

բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

- Քանի որ գործնականում ՀՀՍՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՍՍԽ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՍՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների: Քանի որ Խումբը ներկայումս իր ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից որևէ մեկը չի ներկայացրել զուտ հիմունքով կիրառելով ՀՀՍՍ 32-ի դրույթները, այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել ներկայացված բոլոր ժամանակների համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՍՍ 39 (Փոփոխություն), Ածանցյալների փոխարինումը և հեջավորման հաշվապահական հաշվառման շարունակությունը

ՀՀՍՍ 39-ի փոփոխությունները թույլ կտան շարունակել հեջավորման հաշվապահական հաշվառումը այնպիսի իրավիճակում, որտեղ ածանցյալը, որը նախատեսված էր որպես հեջավորման գործիք, ըստ օրենքի կամ կանոնակարգի փոխարինվել էր, որպեսզի իրականացներ քլիրինգ կենտրոնական գործընկերոջ հետ, եթե նման պայմաններ լինեին:

ՀՀՍՍ 36 (Փոփոխություն), Ոչ ֆինանսական ակտիվների գծով փոխհատուցվող գումարների բացահայտումներ

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ Խումբը պետք է բացահայտի ակտիվի փոխհատուցվող գումարը (կամ՝ դրամական միջոցների գեներացման ակտիվի կամ ակտիվների խմբի) ամեն անգամ, երբ արժեզրկման ծախսը ճանաչվում է կամ հակադարձվում ժամանակահատվածի ընթացքում: Բացի այդ, նրանք ներկայացնում են որոշ նոր բացահայտումներ, որոնք պետք է կատարվեն, երբ արժեզրկված ակտիվի փոխհատուցվող գումարը հիմնված է իրական արժեքի վրա՝ հանած օտարման ծախսերը, այդ թվում՝

- իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն, ներառյալ իրական արժեքի հիերարխիայի կիրառելի մակարդակը, և յուրաքանչյուր գնահատման մեթոդների նկարագրությունը և կատարված հիմնական ենթադրությունները,

- կիրառված զեղչման դրույքները, երբ օտարման ծախսերը հանած իրական արժեքը չափվում է կիրառելով ներկա արժեքի մեթոդը:

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների:

ՖՀՍՍ 10, 12 և ՀՀՍՍ 27, Ներդրումային ընկերություններ

Փոփոխությունները տալիս են ներդրումային ընկերության սահմանումը և տրամադրում են այդ սահմանման մանրամասն կիրառման ուղեցույցը: Այն ընկերությունները, որոնք համապատասխանում են սահմանմանը պետք է չափեն ներդրումները, որոնք հանդիսանում են ուրիշ ընկերությանը վերահսկող բաժնեմաս (այլ կերպ ասած, դուստրերը), իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, դրանց համախմբման փոխարեն: Բարեփոխումները նաև ներկայացնում են ներդրումային ընկերությունների համար նոր բացահայտումների պահանջներ:

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների:

ՖՀՍՍ 16, Վարձակալություն

Այս փոփոխությունները տալիս են վարձակալության նոր սահմանում, որն էական ազդեցություն է ունենում վարձակալի հաշվառման վրա, մասնավորապես՝ վարձակալությունների մեծ մասը ճանաչվում է հաշվապահական հաշվեկշռում: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ վարձակալությունների համար ճանաչվում է.

- Օգտագործման իրավունքով ակտիվ (ՕԻ ակտիվ)
- Վարձակալության գծով պարտավորություն:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է.

- ՕԻ ակտիվի համար հաշվարկված մաշվածություն
- Վարձակալական Պարտավորության համար հաշվարկված տոկոսային ծախս:

Որպես ակտիվ հաշվառումը վարձակալի մոտ ճանաչման բացառություններն են.

- Կարճաժամկետ վարձակալություններ (< 12 ամսից)
- Փոքրարժեք ակտիվներ:

3.5 Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:
Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՍՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

ՀՀՍՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՍՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՍՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՍՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՍՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:

Խմբի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՍՍ 9-ի ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:
Հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները, բարեփոխումները հավանաբար նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՍՍ 14 Հետաձգված վճարումներ կարգավորվող սակագներով իրականացվող գործունեության գծով*
- *ՖՀՍՍ 11 (փոփոխություն) Համատեղ գործողություններում շահերի ձեռքբերման հաշվառում*
- *(ՀՀՍՍ 16 և ՀՀՍՍ 38 փոփոխություն) Ամորտիզացիայի և մաշվածության ընդունելի մեթոդների պարզաբանում*
- *(ՀՀՍՍ 19 փոփոխություն) Հատուցումների սահմանված նախագիծ. Աշխատակիցների վճարներ*
- *ՖՀՍՍ-ների տարեկան բարեփոխումներ 2011-2013թթ.*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Ֆինասական հաշվետվությունների համախմբում

Դուստր կազմակերպությունները, որոնց նկատմամբ Խումբը կարող է տնօրինել ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին կամ այլ կերպ վերահսկում է այդ ընկերության գործունեությունը, համախմբվում են: Դուստր կազմակերպությունների հաշվետվությունները համախմբվում են, երբ վերահսկումը փոխանցվում է Խմբին և բացառվում են համախմբումից, երբ դադարում է վերահսկելու հնարավորությունը:

Բոլոր ներխմբային գործառնությունները, հաշվարկների մնացորդները կամ չիրացված հասույթը բացառվում են: Բացառվում է նաև չիրացված վնասը, մինչև ձեռք չի բերվում համոզվածություն փոխանցված ակտիվի արժեզրկման վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում, դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվել է Խմբի կողմից ընդունված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր Ընկերության հաշվետու ամսաթիվը նոյեմբերի 30-ն է (տես ծանոթ. 1):

Ձեռք բերման ժամանակ, Դուստր կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու պայմանական պարտավորությունները չափվում են ձեռք բերման օրվա դրությամբ իրական արժեքով: Ձեռք բերման արժեքի և ձեռք բերված զուտ ակտիվների դրական տարբերությունը հաշվառվում է որպես գուդվիլ: Եթե ձեռք բերման արժեքը փոքր է ձեռք բերված դուստր կազմակերպության զուտ ակտիվների իրական արժեքից, ապա տարբերությունը ճանաչվում է ուղղակիորեն շահույթում կամ վնասում ձեռք բերման ժամանակաշրջանում: Չվերահսկվող մասնակցությունը հաշվառվում է ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի համապատասխան չափով: Հետագայում, չվերահսկվող մասնակցությանը գերազանցող ցանկացած վնաս վերագրվում է Մայր Կազմակերպության բաժնեմասին: Մայր Ընկերության բաժնետերերին հասանելիք բաժնետիրական կապիտալը և չվերահսկվող մասնակցության հասանելիք զուտ եկամուտը արտացոլվում են առանձին տողերով հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում:

4.2 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

Խումբը կիրառում է ձեռքբերման մեթոդը ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման համար: Դուստր ընկերության վերահսկողության ձեռք բերման նպատակով Խմբի կողմից փոխանցված փոխհատուցումը հաշվարկվում է Խմբի կողմից թողարկված սեփական կապիտալի և պարտավորությունների, փոխանցված ակտիվների ձեռք բերման ամսաթվով հաշվառվող իրական արժեքով, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող որևէ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռքբերման ծախսերը ճանաչվում են որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման ժամանակ Խումբը ճանաչում է որոշելի ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները, անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք նախկինում ճանաչվել են ձեռք բերվողի ֆինանսական հաշվետվություններում՝ մինչ ձեռք բերումը: Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռք բերման ամսաթվով՝ իրական արժեքով:

Գուդվիլը հաշվառվում է որոշելի ոչ նյութական ակտիվների առանձին ճանաչումից հետո: Այն հաշվարկվում է որպես ա) փոխանցված հատուցման իրական արժեքի, բ) ձեռք բերվողում չվերահսկվող բաժնեմասի ճանաչված գումարի և գ) ձեռքբերման ամսաթվի դրությամբ ձեռք բերվողի սեփական կապիտալում բաժնեմասերի իրական արժեքի և որոշելի զուտ ակտիվների ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքի նկատմամբ հավելյալ գումարի չափով: Եթե որոշելի զուտ ակտիվների իրական արժեքները գերազանցում են վերը հաշվարկված գումարը, գերազանցող մասը ամիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Խումբը համարում է չվերահսկվող բաժնեմասերի հետ գործառնությունները որպես խմբի կապիտալի սեփականատերերի հետ գործարքներ: Չվերահսկվող բաժնեմասի գնման դեպքում, վճարված հատուցման և դուստր ընկերության զուտ ակտիվների մնացորդային արժեքի համապատասխան ձեռքբերված բաժնեմասի տարբերությունը հաշվառում է սեփական կապիտալում: Չվերահսկվող բաժնեմասերի օտարումից շահույթը կամ վնասը հաշվառվում է սեփական կապիտալում:

Երբ խմբի վերահսկողությունը կամ նշանակալի ազդեցությունը դադարում է, ընկերությունում առկա որևէ բաժնեմաս վերաչափվում է իրական արժեքով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչելով մնացորդային արժեքի փոփոխությունը: Իրական արժեքը դա սկզբնական մնացորդային արժեքն է՝ որպես ասոցիացված ընկերություն, համատեղ ձեռնարկություն կամ ֆինանսական ակտիվ պահպանված բաժնեմասը հետագայում հաշվառելու նպատակով: Ավելին, այդ

կազմակերպության գծով նախկինում այլ համապարփակ եկամուտում ճանաչված որևէ գումար հաշվառվում է այնպես, ինչպես կարվեր եթե խումբը ուղղակիորեն օտարեր նշված ակտիվները կամ պարտավորությունները: Սա կարող է նշանակել, որ այն գումարները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ եկամուտում վերադասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.3 Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի (ընթացքի) դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն կոմերցիոն բովանդակություն (այսինքն՝ գործարքի տնտեսական կողմի վրա նշմարելի ազդեցություն չունեն): Վերը նշված լրացուցիչ հատուցումները վերաբերում են այն գումարներին, որոնք գերազանցում են ապահովագրական պատահարի տեղի չունենալու դեպքում վճարվելիք գումարները:

Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

Ճանաչում և չափում

Համախառն ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Համախառն ապահովագրավճարները ընդգրկում են միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները, և չեն ներառում ապահովագրավճարների գծով հարկերը և այլ պարտադիր վճարները:

Վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով վերաապահովագրավճարների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ ապահովագրավճարներինը:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակված ապահովագրավճարների պահուստ:

Վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով չվաստակած վերաապահովագրավճարների պահուստի հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ չվաստակած ապահովագրավճարներին պահուստինը:

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակած վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է՝ որպես չվաստակված ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

Ապահովագրական հատուցումներ

Համախառն հատուցումները բաղկացած են ապահովադիրներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից, հանած՝ գույքի փրկումից և սուբրոգացիայից վերականգնումները: Հատուցումները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը

Հատուցումներում վերաապահովագրողների մասը ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական հատուցումը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

Վերաապահովագրության միջնորդավճարներից եկամուտ

Ստացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում Խմբից հավելյալ ծառայությունների մատուցում, Խմբի կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան պոլիսների ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ Խմբից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայություններ:

Ձեռքբերման ծախսեր

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել: Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է՝ կիրառելով չվաստակած ապահովագրավճարների և գրանցված ապահովագրավճարների հարաբերակցությունը:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում: Այս պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՝ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորությունը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով ստանդարտ ակտուարական պահանջների կանխատեսման մեթոդները, որոնք հիմնվում են էմպիրիկ տվյալների և ընթացիկ ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել բացասական շեղման մարժա: Պարտավորությունը չի զեղչվում փողի ժամանակային արժեքով: Հավասարակշռման և աղետների պահուստ չի ճանաչվում: Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ պայմանագրային պարտավորությունները կատարվում են կամ երբ այն դադարում է:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում:

Սովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես ապահովագրավճարներից եկամուտ:

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե արդյոք իր կողմից ճանաչված ապահովագրության պարտավորությունները համարժեք են՝ օգտագործելով իր ապահովագրության պայմանագրերի ներքո ապագա դրամական միջոցների հոսքերի ընթացիկ գնահատումները: Եթե այդ գնահատումը ցույց է տալիս, որ իր ապահովագրական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները) համարժեք չեն գնահատված՝ ապագա դրամական միջոցների հոսքերի հետ համեմատած, ապա ամբողջ պակասուրդը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Վերաապահովագրություն

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը փոխանցում է ապահովագրական ռիսկը՝ բոլոր դասերի գծով: Վերաապահովագրության գծով ակտիվները ներկայացնում են վերաապահովագրող ընկերություններից ստացվելիք գումարները:

Վերաապահովագրության գծով ակտիվները վերանայվում են արժեզրկման համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, երբ հաշվետու տարվա ընթացքում առաջանում է արժեզրկման հայտանիշ: Արժեզրկումն առաջանում է այն ժամանակ, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ վերաապահովագրական ակտիվի ճանաչումից հետո Խումբը կարող է չստանալ բոլոր ստացվելիք գումարները, որոնք պետք է վճարվեն համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն և այդ իրադարձությունն ունի արժանահավատորեն չափելի ազդեցություն այն գումարների վրա, որ Խումբը ստանալու է վերաապահովագրողից: Արժեզրկման կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերաապահովագրության ձեռքբերման գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ձեռքբերման օրվա դրությամբ և չեն ամորտիզացվում: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Խմբին ապահովադիրների նկատմամբ իր պարտավորություններից:

Վերաապահովագրության գծով պարտավորություններ են հանդիսանում վերաապահովագրող ընկերություններին վճարվելիք գումարները: Վճարվելիք գումարները գնահատվում են համապատասխան վերաապահովագրության պայմանագրերի համաձայն: Ապահովագրավճարները և պահանջները ներկայացվում են համախառն հիմքով՝ ստանձնած և փոխանցված վերաապահովագրության համար:

Վերաապահովագրության գծով ակտիվները և պարտավորությունները ապաճանաչվում են, երբ պայմանագրային իրավունքները կատարվում են, կամ, երբ պայմանագիրը փոխանցվում է այլ կողմի:

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվառումը նույնն է, ինչ ֆինանսական գործիքներինը, ինչպես նկարագրված է 4.9, 4.10 և 4.11 ծանոթագրություններում:

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ապահովագրության պայմանագրերին չվերաբերող եկամուտների և ծախսերի ճանաչման չափանիշները ներկայացված են ստորև:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամուտը բաղկացած է շահաբաժիններից, տոկոսային եկամուտից, պարտքային արժեթղթերի և այլ վարկերի և դեբիտորական պարտքերի ամորտիզացված արժեքի փոփոխություններից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում հաշվեգրման զուգահեռ և հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախս

Վճարված տոկոսագումարը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսագումարը ներառվում է տոկոսային ֆինանսական պարտավորություն հաշվեկշռային արժեքում:

4.5 Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2019թ. Սեպտեմբեր 30	2018թ. Սեպտեմբեր 30
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	475.97	482.71
ՀՀ դրամ/1 Եվրո	519.81	559.65

4.6 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային վճարումները, ապա հարկվող շահույթը կամ կորուստը հիմնվում են մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ դիրք հարկային օրենսդրությունն արտածելու և հարկային հաշվարկումները վերանայելու

համար: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային վերանայումը կարող է ներառել վերանայման տարվան անմիջապես հաջորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային վերանայումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բառառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվության այլ ծախսերում:

4.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են կանխիկ դրամ, դրամական միջոցներ ճանապարհին և բանկային հաշիվներ, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հեշտությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.8 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ավանդային հաշիվներ: Բացի այդ Խումբը տրամադրում է փոխառություններ այլ ֆինանսական կազմակերպություններին: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:
Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող

գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, դեբիտորական պարտքեր և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Խումբը սահմանում է իր ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչումից հետո և անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ կատարում է վերագնահատում յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով: Դեբիտորական պարտքերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից օգուտը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Խումբը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Խմբի կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

4.10 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Խումբն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Խումբը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Եթե հետագա ժամանակաշրջանում, արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազեցումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկումի ճանաչումից հետո առաջացող որևէ իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է: Արժեզրկումից կորստի որևէ հետագա հակադարձում ճանաչվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է հակադարձման ամսաթվով իր հակադարձված արժեքին:

4.11 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Խումբը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Խմբի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Խմբի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.12 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.13 Վարձակալություն

Վարձակալության մասով տեղի է ունեցել փոփոխություն՝ ՀՀՄՍ 17 փոխարինվել է ՖՀՄՍ 16, Վարձակալությամբ (Ավելի մանրամասն՝ կետ 3.4):

4.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Ձեռք բերված դուստր ընկերության հիմնական միջոցները ի սկզբանե ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ իրական արժեքով՝ ձեռք բերման ամսաթվի դրությամբ: Ձեռնարկատիրական միավորման ժամանակ ձեռք բերված ակտիվների կուտակված մաշվածությունը ձեռքբերման ամսաթվի դրությամբ չի ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	4	25
Տրանսպորտային միջոցներ	7	14.29
Գրասենյակային գույք	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք կատարվում են և երբ բավարարվում են ճանաչման չափանիշները: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.15 Գուդվիլ և ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են գուդվիլից, համակարգչային ծրագրերից և ապահովագրական պորտֆելի ձեռքբերման գծով ոչ նյութական ակտիվից և այլ ոչ նյութական ակտիվներից:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների զուտ իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռք բերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե այն բացասական է (բացասական գուդվիլ), այն անմիջապես ճանաչվում է տարվա արդյունքներում:

Փոխանակման օրվա դրությամբ ձեռք բերված զուտ ակտիվներում բաժնեմասի մնացորդային արժեքի նկատմամբ հավելյալ ներդրման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես չվերահսկվող բաժնեմասի ձեռք բերումից առաջացած գուդվիլ:

Գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կուտակված կորուստները:
Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.16 Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններ, թողարկված արժեթղթեր և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.18 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտները ու ծախսերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Խմբի առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների

հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՀՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահաջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Խմբի անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի բիզնես սեգմենտների և ապահովագարական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն և գրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Խումբը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպք» մեթոդով, բացառությամբ ապահովագրության այն դասերի համար, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Նման դասերի համար օգտագործվում է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում:

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից պահուստներ

Խումբը գնահատում է խնդրահարույց դեբիտորական պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբերվել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի դեբիտորական պարտքերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Խումբը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի և արդյունաբերության ռիսկում և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում):

Ֆինանսական գործիքների դասակարգում

Խմբի ֆինանսական գործիքները ներառում են ՀՀ պետական պարտատոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը դասակարգում է արժեթղթերը որպես մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և առևտրային նպատակով պահվող արժեթղթեր:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների:

6 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Սարքա-վորումներ	Փոխադրա միջոցներ	Գրասեն-յակային սարքավորում	Այլ հիմնական միջոցներ	Շենքեր և հող	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ						
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	370,617	169,165	138,713	130,496	22	809,013
Ավելացում	18,223	6,994	20,895	5,355	0	51,467
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	388,840	176,159	159,608	135,851	22	860,480
Ավելացում	17,601	-2,604	3,751	-3,540	0	15,208
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	406,441	173,555	163,359	132,311	22	875,688
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ						
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	299,940	78,672	116,205	82,097	0	576,914
Ավելացում	27,915	14,258	9,059	15,924		67,156
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	327,855	92,930	125,264	98,021	0	644,070
Ավելացում	23,979	10,975	7,771	8,319		51,044
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	351,834	103,905	133,035	106,340	0	695,114
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ						
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	54,607	69,650	30,324	25,971	22	180,574
2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ	60,985	83,229	34,344	37,830	22	216,410
2017 դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,677	90,493	22,508	48,399	22	232,099
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,477	110,208	19,554	48,048	22	216,308

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2019թ սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 483,000 հազար դրամ:

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2019թ սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների :

7 Գուդվիլ և ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Ապահովագրական պորտֆելի ձեռքբերման գծով ոչ նյութական ակտիվ	Գուդվիլ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ	103,607	81,721	687,317	872,645
Ավելացում	2,254	0	0	2,254
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	105,861	81,721	687,317	874,899
ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ				0
2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,360	30,190	0	75,550
Մասհանումներ	3,977	15,942		19,919
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	49,337	46,132	0	95,469
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ				0
2019 սեպտեմբերի 30-ի դրությամբ	56,524	35,589	687,317	779,430
2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,247	51,531	687,317	797,095

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2019թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 45,745 հազար դրամ:

Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2019թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ (2018թ.՝ նույնպես):

8 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Դեբիտորական պարտքեր	8,404	19,026
Կանխավճարներ հատուցումների գծով	387,697	191,310
Կանխվճարներ և այլ դեբիտորներ	41,246	46,855
Հաշվարկներ աշխատակիցների հետ	16,837	55,672
Կանխավճարներ այլ հարկերի գծով	17,755	16,946

Այլ ակտիվներ	3,116	7,905
Ընդամենը այլ ակտիվներ	**475,054**	**337,714**

9 Հետաձգված ձեռքբերման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Հետաձգված ձեռք բերման ծախսեր	455,346	330,366
Այլ հետաձգված ծախսեր	90	0

Այլ հետաձգված ծախսերը վերաբերում են այն ապահովագրության պայմանագրերին, որոնց գծով նախատեսված է ապահովագրական վճարների մասնակի վերադարձ: Վերադարձված վճարների գծով ծախսը ճանաչվում է ապահովագրության պայմանագրի ժամկետի ընթացքում՝ ապահովագրավճաներից եկամուտին զուգընթաց:

10 Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Պահանջներ ապահովադիրների և գործակալների նկատմամբ	1,584,750	1,584,172
Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ	174,300	196,364
Սուբրոգացիա	90,636	220,349
Վերապահովագրության ընդունած ռիսկ	877	862
Արժեզրկումից պահուստ	-64,695	-96,963
Ընդամենը ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	**1,785,869**	**1,904,785**

11 Վերաապահովագրական ակտիվներ

Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ	3,752,072	1,182,955
Վերաապահովագրական ակտիվներ	3,752,072	1,182,955

Տարվա ընթացքում արժեզրկումից պահուստի շարժը ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի մասով հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

	30.09.2019
2018թ. դեկտեմբերի 31- դրությամբ	**63,466**
Պահուստի ձևավորում	131,942
Ակտիվների նվազում	91,440
2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	**103,968**

12 Պահանջներ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Ավանդներ բանկերում	6,619,774	6,412,013
Փոխառություններ վարկային կազմակերպություններին	0	0
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**6,619,774**	**6,412,013**

2019թ. սեպտեմբերի 30- ի դրությամբ բանկերում ավանդները 3,603,515 հազար դրամ գումարով (60%) կենտրոնացված են 5 բանկերում:

13 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	0	0
ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր	152,733	177,300
Ֆիզիկական անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ	40,000	10,000
Առևտրային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ	160,000	

Ընդամենը՝ մինչև մարման ժամկետը ֆինանսական ակտիվներ	**352,733**	**187,300**

2019 և 2018թթ. ընթացքում Ընկերությունը չի վերադասակարգել ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները որպես իրական արժեքով հաշվառվող: 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների իրական արժեքը կազմել է 150,000 հազար դրամ:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները՝ ըստ տոկոսադրույքների և մարման ժամկետների ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**30.09.2019**		**30.09.2018**	
	%	**Ժամկետ**	**%**	**Ժամկետ**
ՀՀ ֆինանների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	**14-17 %**	**2016-2019**	**14-14.5 %**	**2016-2018**
ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր	**6.5-13 %**	**2016-2019**	**6.5-13 %**	**2016-2018**

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը ըստ անվանական արժեքի և զեղչատոկոսի, հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**30.09.2019**	**30.09.2018**
Անվանական արժեք	**150,000**	**174,104**
Զեղչատոկոս/ հավելավճար	**2,733**	**3,195**
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	**152,733**	**177,300**

14 Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	**30.09.2019**	**30.09.2018**
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	2,816,899	2,798,983
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	0	0
Ընդամենը՝ առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ	**2,816,899**	**2,798,983**

Նշված արժեթղթերը ըստ անվանական արժեքի և մարման ժամկետների, հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	30.09.2019		30.09.2018	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	14.3-16.8 %	2016-2023	14.3-16.8 %	2016-2023

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	30.09.2019	30.09.2018
Կանխիկ դրամական միջոցներ	4,369	7,206
Դրամական միջոցներ ճանապարհին	0	10,000
Բանկային հաշիվներ	599,772	487,665
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**604,141**	**504,871**

2019թ. սեպտեմբերի 30- ի դրությամբ բանկային հաշիվների միջոցների 92.46 % (554,557 հազար դրամ) կենտրոնացված են 5 ՀՀ բանկերում:

16 Սեփական կապիտալ

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 3,983,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է 3,983,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում «Սիմարեքս Մենեջմենթ Լիմիթեդ » (Կիպրոս):

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2018թ.՝ նույնպես):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերն իրավունք ունի ստանալ շահաբաժիններ, ըստ պահանջի: 2018թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Ընկերությունը բաժնետիրոջը վճարել է 250,000 հազար ՀՀ դրամ:

Ընկերությունը բաժնետիրական կապիտալը ավելացրել է 2014 թ. ընթացքում 1,000 մլն դրամ, 2013թ.՝ 913 մլն դրամ, 2012թ՝ 380 մլն դրամ:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերութան կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

17 Ապահովագրական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2019թ. սեպտեմբեր 30-ի			2018թ. սեպտեմբեր 30-ի		
	Ապահովագրական պահուստներ	Վերաապահովագրական պահուստներ	Զուտ պահուստներ	Ապահովագրական պահուստներ	Վերաապահովագրական պահուստներ	Զուտ պահուստներ
Չվաստակած ապահովագրական վճարներ	4,963,254	-580,694	4,382,560	4,439,818	-456,315	3,983,503
Ներկայացված պահանջներ	3,750,814	-2,994,997	755,817	1,353,438	-667,219	686,220
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	550,666	-164,765	385,901	389,770	-53,192	336,578
Բոնուսների պահուստ	15,150	-11,616	3,534	11,170	-6,230	4,940
	9,279,884	**-3,752,072**	**5,527,812**	**6,194,197**	**-1,182,956**	**5,011,241**

Ստորև ներկայացված աղյուսակները ցույց են տալիս ապահովագրական պահուստների և համապատասխան վերաապահովագրական պահուստների գծով փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում.

Չվաստակած ապահովագրավճարներ

Հազար ՀՀ դրամ	Ապահովագրական պարտավորություններ	Վերաապահովա-գրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	3,493,485	(362,029)	3,131,456
Ընթացիկ ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրավճարներ	10,433,081	(2,374,417)	8,058,664
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(9,876,444)	2,358,102	(7,518,343)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,050,122	(378,344)	3,671,777
Ընթացիկ ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրավճարներ	9,045,276	(2,773,108)	6,272,168
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(8,132,144)	2,570,758	(5,561,385)
2019թ սեպտեմբերի 30-ի դրությամբ	4,963,254	(580,694)	4,382,560
Պահանջների պահուստ			
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	395,444	(51,922)	343,523
Ներկայացված պահանջներ	1,315,832	(676,415)	639,417

Բոնուսների պահուստ	11,669	(9,971)	1,698
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,722,946	(738,308)	984,637
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	550,666	(164,765)	385,901
Ներկայացված պահանջներ	3,750,814	(2,994,997)	755,817
Բոնուսների պահուստ	15,150	(11,616)	3,534
2019թ սեպտեմբերի 30-ի դրությամբ	4,316,630	(3,171,378)	1,145,252

18 Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ	24,853	32,826
Վերաապահովագրողներին վճարվելիք գումարներ	548,365	552,210
Ապահովագրական ընկերություններին, գործակալներին, բրոքերներին և միջնորդներին վճարվելիք գումարներ	427,880	146,757
Ընդամենը ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	**1,001,098**	**731,793**
Ապահովագրության գծով ստացված կանխավճարներ	**117,915**	**96,867**

19 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

	30.09.2019	30.09.2018
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
Առևտրային արժեթղթեր	0	0

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում, գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

20 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Կրեդիտորական պարտքեր հարկերի և տուրքերի գծով	51,177	50,152
Աշխատակիցներին վճարվելիք աշխատավարձ և այլ վճարներ	0	2,052
Այլ ներքին կրեդիտորական պարտքեր	101,015	78,670
Այլ արտաքին կրեդիտորական պարտքեր	246,770	197,797
Այլ պարտավորություններ	0	0
Ընդամենը այլ պարտավորություններ	398,962	328,671

21 Ապահովագրավճարներ

Ապահովագրության դասեր	Հաշվետու ժամանակաշրջան			Նախորդ հաշվետու ժամանակաշրջան		
	Հաշվեգրված ապահովագրավճարներ	Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	Զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ	Հաշվեգրված ապահովագրավճարներ	Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	Զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	583,692	2,860	580,832	343,854	2,309	341,545
Առողջության ապահովագրություն	1,603,257	244,656	1,358,601	1,393,284	6,563	1,386,721
Սոց.փաթ. շահառուների առողջ. ապահովագրություն	1,122,902	0	1,122,902	1,068,704	0	1,068,704
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	376,063	118,052	258,011	317,301	96,427	220,874
Օդանավերի ապահովագրություն	110,664	97,860	12,804	241,151	203,017	38,134
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	278,787	163,494	115,293	188,502	91,170	97,332
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	597,878	225,863	372,015	807,645	253,119	554,526
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	42,624	0	42,624	39,501	0	39,501
Օդանավերի օգտագործումից բխող	0	0	0	0	0	0

Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	366,780	287,290	79,490	117,941	80,598	37,343
Վարկերի ապահովագրություն	0		0	0		0
Ֆինանսական վնասների ապահովագրություն	182,783	172,778	10,005	165,642	163,404	2,238
Աջակցության ապահովագրություն	114,590	47,654	66,936	108,034	45,061	62,973
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	4,505,880		4,505,880	3,921,452		3,921,452
Ընդամենը	**9,885,900**	**1,360,507**	**8,525,393**	**8,713,011**	**941,668**	**7,771,343**
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճար ների պահուստում	-913,132	202,350	-710,782	-946,333	94,286	-852,047
Վաստակած ապահովագրավճարներ	**8,972,768**	**1,158,157**	**7,814,611**	**7,766,677**	**847,382**	**6,919,296**

22 Վերաապահովագրության միջնորդավճարների գծով եկամուտ

	30.09.2019	30.09.2018
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	-	-
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	-	-
Հրդեհներից և բնական աղետներից ապահովագրություն	1,824	887
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	22,450	2,710
Ֆինանսական վնասների ապահովագրություն	20,963	18,763
Այլ դասեր	26,020	
Ընդամենը վերաապահովագրության միջնորդավճարների գծով եկամուտ	**71,257**	**22,360**

23 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթով գործառնություններից	-1,619	-11,295
Առևտրային արժեթղթերի իրացումից և իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	211,896	206,684
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**210,276**	**195,389**

24 Ներդրումային եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Եկամուտներ/կորուստներ ՀՀ պետական արժեթղթերի գործունեությունից	410,260	449,472
Արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսային եկամուտ	13,081	16,876
Տոկոսային եկամուտներ ընթացիկ արժեթղթերից	10,658	7,914
Ընդամենը ներդրումային եկամուտ	**433,999**	**474,262**

25 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ	130,726	95,028
Վերաապահովագրողներից ստացվելիք այլ եկամուտներ	23,495	14,808
Այլ եկամուտներ	6,015	149,177
Ընդամենը այլ եկամուտներ	**160,236**	**259,013**

26 Ապահովագրական հատուցումներ

Հազար ՀՀ դրամ	Ընթացիկ տարվա հատուցումներ	Փոփոխություն տեղի ունեցած սակայն չներկայացված պահանջների պահուստում	Փոփոխություն ներկայացված սակայն չվճարված պահանջների պահուստում	Եկամուտ/ծախս ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում	**Ապահովագրական հատուցումներ**	Վերաապահովագրողների մասը ընթացիկ տարվա հատուցումներում	Վերաապահովագրողների մասը տեղի ունեցած սակայն չներկայացված պահանջների պահուստի փոփոխությունում	Վերաապահովագրողների մասը ներկայացված սակայն չվճարված պահանջների պահուստի փոփոխությունում	Ապահովագրական հատուցումներում վերաապահովագրողի մասը	**Զուտ ապահովագրական հատուցումներ**
Դժբախտ պատահարներ	(15,982)	993	8,963	-	**(25,938)**	-	-	(176)	**(176)**	**(26,114)**
Առողջության	(1,093,029)	8,584	14,673	-	**(1,116,286)**	-	-	-	**-**	**(1,116,286)**
Սոց փաթ. շահ. առողջ.	(692,131)	8,188	6,158	-	**(706,477)**	-	-	-	**-**	**(706,477)**
Ցամաքային տրանսպորտ	(132,594)	(1,599)	52,444	-	**(183,439)**	60,415	(1,850)	18,367	**76,932**	**(106,507)**
Օդանավեր	-	-	-	-	**-**	-	-	-	**-**	**-**

Բեռներ	(121,413)	1,317	(63,576)	-	**(59,154)**	84,986	894	(44,327)	**41,553**	**(17,601)**
Հրդեհ և բնական աղետներ	(48,271)	113,037	2,286,945	-	**(2,448,253)**	13,364	109,536	-	**122,900**	**(2,325,353)**
Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվություն	(3,441)	(530)	-	-	**(2,911)**	-	-	2,224,137	**2,224,137**	**2,221,226**
Ընդհանուր պատասխանատվություն	(2,812)	(73)	16,977	-	**(19,716)**	1,588	(1,006)	(1,942)	**(1,360)**	**(21,076)**
Վարկերի ապահովագրություն	-	-	-	-	**-**	-	-	-	**-**	**-**
Ֆինանսական վնասներ	(35,934)	1,630	109,031	-	**(146,595)**	32,896	1,456	109,031	**143,383**	**(3,212)**
Աջակցության	(21,217)	308	22,709	-	**(44,234)**	14,843	(198)	16,353	**30,998**	**(13,236)**
ԱՊՊԱ	(3,126,402)	19,841	(20,722)	(32,367)	**(3,157,888)**	-	-	-	**-**	**(3,157,888)**
Ընդհանուր	(5,293,226)	151,696	2,433,602	(32,367)	**(7,910,891)**	208,092	108,832	2,321,443	**2,638,367**	**(5,272,524)**

27 Ձեռքբերման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Բրոքերային ծախսեր		15,926
Ապահովագրական գործակալների գծով ծախսեր	712,380	556,971
Ընդամենը ձեռքբերման ծախսեր	**712,380**	**572,896**

28 Այլ ապահովագրական ծախսեր

	30.09.2019	30.09.2018
Նախնական բուժզննման և կանխարգելիչ միջոցառումների գծով ծախսեր	12,369	12,122
Կարգավորման ծախսեր	75,686	

Այլ ծախսեր	124,273	36,644
Ընդամենը	**212,329**	**48,766**

29. Ֆինանսական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Տոկոսային ծախսեր բանկերից ներգրաված ընթացիկ վարկերի, փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց	0	0
Տոկոսային ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրաված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց	0	0
Ընդամենը	**0**	**0**

30 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Անձնակազմի գծով ծախսեր	1,167,970	1,309,379
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	62,252	100,072
Գովազդի ծախսեր	145,430	270,398
Գործուղման ծախսեր	27,706	43,024
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	61,865	61,764
Գործառնական վարձակալություն	50,768	194,111
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի)	7,077	5,572
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	19,250	31,064
Անվտանգության գծով ծախսեր	13,620	13,343
Ներկայացուցչական ծախսեր	14,461	19,885
Բանկային ծախսեր	24,577	33,245
Գրասենյակային ծախսեր	112,654	127,389
Վճարված տուգանքներ	1,163	706
Անդամակցության վճար	1,970	2,037
Վճարումներ ավտոապահովագրողների Բյուրո	293,523	268,443
Պահանջների կարգավորման գծով ծախսեր	-	47,525
Այլ ծախսեր	38,540	81,736

Ընդամենը այլ ծախսեր	**2,042,825**	**2,609,693**
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	**75,757**	**67,528**
Վարձակալության գծով ֆինանսական ծախսեր	**19,168**	**-**
Վարձակալությամբ ստացված ակտիվների ամորտիզացիա	**125,895**	**-**
Արժեզրկումից կորուստներ	**263,666**	**71,478**

31 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններն ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները ներկայացնում են պահանջներ այնպիսի գործարքների կամ հաշվառման մեթոդների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում դիտողություններ չեն եղել: Դրա հետևանքով կարող են առաջանալ լրացուցիչ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումները կարող են ընդգրկել հաշվետու տարվան անմիջապես նախորդող 3 տարի ժամանակաշրջան, սակայն որոշ պայմաններում ստուգումները կարող են ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ:
Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանն ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:
Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – ընկերությունը որպես վարձակալող

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր՝ գրասենյակային տարածք վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**30.09.2019**	**30.09.2018**
Մինչև 1 տարի		211,185
1-5 տարի	251,790	631,072
5-ից ավելի	-	86,873
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով		**929,129**

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Մինչև 1 տարի		211,185

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Այնուամենայնիվ,

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները ապահովագրված են: Ընկերությունը չունի սխալների կամ բացթողումների հետևանքով առաջացած ապահովագրական պարտավորություններ:

Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2010թ. Ընկերությունը հանդիսանում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրոյի անդամ (այսուհետ՝ Բյուրո): Բյուրոյի նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները կատարում են միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներ: Բյուրոն՝ երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

1. վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձը անհայտ է (այս դեպքում հատուցվում է միայն տուժած անձանց պատճառված վնասը),
2. պատճառվել է վնաս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր,
3. վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
4. վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ, եթե նա պարտավոր էր հատուցել պատճառված վնասը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

Տուժած անձանց հատուցումները Բյուրոյի կողմից սկսել են վճարվել 2011թ.-ից:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է համարվում Դանիել Խաչատուրովը, ով կապակցված է ինչպես Ընկերության բաժնետիրոջ, այնպես էլ Ընկերության մայր կազմակերպության բաժնետերերի հետ:
Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Կապակցված կողմերի հետ հաշվետու եռամսյակում իրականացված գլխավոր գործարքների մանրամասները հետևյալն են.

Ապահովագրության դասը	Ապահովագրության վկայագիր	Ապահովագրության ժամկետը	Ապահովագրական գումարը/հազար դրամ/	Ապահովագրավճար /հազար դրամ/	Ապահովագրական սակագինը
1	2	3	4	5	6
Աջակցության ապահովագրություն	TI278172	11/07/2019-25/07/2019	16,118	4	0.03%
Աջակցության ապահովագրություն	TI278171	11/07/2019-25/07/2019	16,118	4	0.03%
Աջակցության ապահովագրություն	TI278168	11/07/2019-25/07/2019	16,118	4	0.03%
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	MR001356	06/09/2019-05/09/2020	6,970	160	2.30%

Ղեկավար անձնակազմի գծով եռամսյակի ընթացքում վճարված միջին ամսական աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են՝

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	71,189	93.992

33 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, որոնք հաշվեկշռում արտացոլված չեն իրենց իրական արժեքով, ներկայացված են ստորև համապատասխան մնացորդային արժեքներով: Չվաստակած ապահովագրավճարների, պարգևավճարների պահուստում վերաապահովագրողների մասը և գեղչերի պահուստը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում ֆինանսական ակտիվներ: Այլ պարտավորությունները ներառում են միայն կրեդիտորական պարտքերը:

Հազար ՀՀ դրամ		30.09.2019
	Հաշվեկշռային արժեք	**Իրական արժեք**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	**1,785,869**	**1,785,869**
Վերաապահովագրական ակտիվներ	**3,752,072**	**3,752,072**
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	**6,619,774**	**6,619,774**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	**352,733**	**352,733**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**0**	**0**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**604,141**	**604,141**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**0**
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	**9,279,884**	**9,279,884**
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտք	**1,001,098**	**1,001,098**
Այլ պարտավորություններ	**398,962**	**398,962**

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես հավասար է հաշվեկշռային արժեքին

Կարճաժամկետ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար (մինչև երեք ամիս) ենթադրվում է, որ, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը: Այս ենթադրությունը կիրառելի է նաև որոշակի մարման ժամկետ չունեցող ցպահանջ ավանդների, բանկային հաշիվների համար: Վերաապահովագրության ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես արտացոլում է իրական արժեքը:

Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ

Ֆիքսված տոկոսադրույքներով և ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքը որոշվում է նրանց ճանաչման պահին գործող շուկայական տոկոսադրույքները համեմատելով նմանատիպ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական տոկոսադրույքների հետ: Ֆիքսված տոկոսադրույքներով ավանդների գնահատված իրական արժեքը հիմնված դրամական հոսքերի վրա՝ է զեղչված համանման վարկային ռիսկ և ժամկետ ունեցող գործիքների տոկոսադրույքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ այս գործիքների իրական արժեքը չի տարբերվում հաշվեկշռային արժեքների, բացառությամբ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների:

33.1 Իրական արժեքի հիերարխիա

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար ՀՀ դրամ				30.09.2018
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չգնանշվող արժեթղթեր	-	2,798,983	-	-
Ընդամենը	-	**2,798,983**	-	-

Հազար ՀՀ դրամ				30.09.2019
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չգնանշվող արժեթղթեր	-	2,816,899	-	
Ընդամենը	-	**2,816,899**	-	

Ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթերի իրական արժեքը որոշվում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված եկամտաբերության կորի հիման վրա:

34 Ապահովագրական և ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կարևորագույն ռիսկերն են ապահովագրական և ֆինանսական ռիսկերը: Վերջինս ներառում է վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը:

34.1 Ապահովագրական ռիսկ

Ապահովագրության պայմանագրերի գծով Ընկերության հիմնական ռիսկը այն է, որ փաստացի հայցերը և հատուցումները կամ դրանց հետ կապված ժամկետները տարբերվեն սպասված արդյունքներից: Վերոհիշյալը կապված է հայցերի հաճախականության, դրանց բարդության մակարդակի, փաստացի վճարված հատուցումների և երկարաժամկետ հայցերի հետագա զարգացման հետ: Այդ պատճառով, Ընկերության նպատակն է ապահովել բավարար պահուստներ այդ պարտավորությունները ծածկելու համար:

Վերը նշված ռիսկի մակարդակը զսպվում է՝ բազմազանեցնելով ապահովագրության պայմանագրերի լայն պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է նաև անդերռայթինգի քաղաքականության պատշաճ ընտրության և իրականացման միջոցով, ինչպես նաև վերաապահովագրության պայմանագրերի կիրառմամբ:
Ռիսկերի զսպման քաղաքականության շրջանակներում Ընկերությունը իրականացնում է ինչպես ֆակուլտատիվ, այնպես էլ պարտավորված/օբլիգատոր վերաապահովագրություն: Վերաապահովագրությունը իրականացվում է համամասնական սկզբունքով: Համամասնական վերաապահովագրության հիմնական մասը կազմում է քվոտային վերաապահովագրությունը, որն իրականացվում է Ընկերության գործունեության որոշ դասերի գծով ռիսկի ընդհանուր ենթարկվածությունը նվազեցնելու նպատակով:

Վերաապահովագրողներից վերականգնվող գումարները գնահատվում են ըստ չհատուցված հայցերի պահուստի և համապատասխանում են վերաապահովագրության պայմանագրերին: Չնայած նրան, որ Ընկերությունն ունի վերաապահովագրության պայմանագրեր, այն չի ազատվում ապահովադիրների նկատմամբ ուղղակի պարտավորություններից և հետևաբար փոխանցված ապահովագրության հետ կապված գոյություն ունի նաև վարկային ռիսկ, կապված վերաապահովագրողի կողմից վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման հետ: Ընկերության կողմից վերաապահովագրության ձեռքբերումը այնպես է բազմազանեցված, որպեսզի Ընկերությունը կախված չլինի մեկ վերաապահովագրողից, իսկ Ընկերության գործառնությունները կախված չլիննեն վերաապահովագրության մեկ պայմանագրից: Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա չէ որևէ վերաապահովագրող, որի գծով ռիսկի սահմանաչափը գերազանցում է վերաապահովագրական ակտիվների 5%-ը:

32.1.1 Ապահովագրության պայմանագրեր

Ընկերությունը հիմնականում կնքում է հետևյալ դասերի ընդհանուր ապահովագրության պայմանագրեր ՝ դժբախտ պատահարների, առողջության, ավտոտրանսպորտային միջոցների, բեռների, հրդեհների և բնական աղետների, ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության, ընդհանուր պատասխանատվության, ֆինանսական կորուստների, արտասահման մեկնողների և ԱՊՊԱ: Առողջության ապահովագրության գծով պայմանագրերը ապահովադիրներին տրամադրում են բժշկական ծախսերի ծածկույթ, իսկ դրանց վերակնքումը չի երաշխավորվում: Ընդհանուր ապահովագրության պայմանագրերը հիմնականում ընդգրկում են 12 ամսյա ժամկետ: Երկարաժամկետ հայցերի դեպքում, որոնց կարգավորման համար մի քանի տարիներ կարող են պահանջվել, առկա է նաև գնաճի ռիսկը:

Առողջության ապահովագրության դեպքում հիմնական ռիսկերն են կենսակերպի փոփոխությունները, համաճարակները և բժշկության և տեխնոլոգիական առաջընթացը: Այս ռիսկերը զգալիորեն չեն տարբերվում՝ կապված Ընկերության կողմից ապահովագրած ռիսկի աշխարհագրական դիրքի, տեսակի կամ արդյունաբերության ճյուղի:

Ռիսկի նման ենթարկվածությունը զսպվում է՝ տարբերակելով ապահովագրական պայմանագրերի մեծ պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է՝ օգտագործելով անդերռայթինգի քաղաքականություն, որն ուղղված է ռիսկերի տարբերակմանը՝ ըստ իրենց բնույթի և ապահովագրավճարների մակարդակների: Վերջինիս կարելի է հասնել՝ իրականացնելով տարբերակում ըստ արտադրության ճյուղերի: Պահանջների վերանայման խիստ քաղաքականությունը՝ նոր և ընթացիկ պահանջների գնահատման, պահանջների կարգավորման ընթացակարգերի մանրամասն վերանայման և պահանջների հնարավոր խարդախությունների հետազոտման տեսքով՝ Ընկերության կողմից օգտագործվող մեթոդներ են ռիսկի հետագա ենթարկվածությունը զսպելու նպատակով: Ընկերությունը խստացնում է պահանջների կառավարման և դրանց արագ զննման քաղաքականությունը՝ անկանխատեսելի իրադարձությունների հավանականությունը նվազեցնելու համար, քանի որ դրանք կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա: Գնաճի ռիսկը զսպվում է ուշադրության կենտրոնում պահելով սպասվող գնաճը՝ ապահովագրության գծով պարտավորությունների գնահատելիս:

Ստորև ներակայացված է ապահովագրական պարտավորությունների և վերաապահովագրական ակտիվների կենտրոնացվածությունը՝ ըստ ապահովագրության դասերի.

Հազար ՀՀ դրամ	30.09.2019			30.09.2018		
	Ապահովագրական պարտավորություններ	Վերաապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրական պարտավորություններ	Վերաապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	404,591	(1,176)	403,415	249,872	(855)	249,017
Առողջության ապահովագրություն	1,512,895	(84,967)	1,427,928	1,345,516	(4,774)	1,340,742
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	427,073	(143,601)	283,471	337,958	(123,609)	214,349
Օդանավերի ապահովագրություն	49,167	(35,835)	13,332	141,146	(118,946)	22,200
Փոխադրվող գույքի ապահովագրություն	118,316	(75,107)	43,209	170,202	(110,290)	59,911
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	2,979,019	(2,401,055)	577,964	703,529	(110,874)	592,654
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	28,624	-	28,624	28,601	-	28,601
Օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	-	-	-
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	263,801	(191,611)	72,190	79,664	(55,678)	23,986
Վարկի ապահովագրություն	-	-	-	-	-	-
Երաշխիքի տրամադրում	-	-	-	-	-	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	741,919	(734,749)	7,170	598,966	(592,223)	6,743
Աջակցության ապահովագրություն	134,704	(83,970)	50,734	108,543	(65,707)	42,836
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,619,775	-	2,619,775	2,430,201	-	2,430,201
Ընդամենը	**9,279,884**	**(3,752,072)**	**5,527,812**	**6,194,197**	**(1,182,955)**	**5,011,242**

Ընկերությունը սահմանում է առավելագույն սահմանաչափեր, որոնք նա պատրաստ է ընդունել ապահովագրության պայմանագրերից բխող ռիսկի կենտրոնացումների գծով: Բացի այդ, Ընկերությունը հետևում է այդ սահմանաչափերին ռիսկերի գնահատման և ընդունման (անդերռայթինգ) ժամանակ:

Առավելագույն կորուստը, վերաապահովագրությունից զուտ, որ Ընկերությունն ընդունում է յուրաքանչյուր պայմանագրի գծով, ընդհանուր կապիտալի 10%-ն է կազմում, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի:

Հիմնական ենթադրություններ

Ընկերության պարտավորությունների գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունը այն է, թե արդյո՞ք Ընկերության ապագա պահանջների զարգացումը նման կլինի անցյալ պահանջների զարգացումների փորձին: Դրանք ներառում են ենթադրություններ, կապված պահանջների գծով միջին ծախսի, պահանջների կարգավորման ծախսերի, սպասվող վնասաբերության ցուցանիշների և յուրաքանչյուր տարում դժբախտ պատահարների գծով պահանջների քանակի հետ: Օգտագործվում են լրացուցիչ որակական դատողություններ՝ գնահատելու համար, թե որ տենդենցները կիրառելի չեն ապագայի համար, օրինակ՝ հատուկենտ դեպքեր, փոփոխություններ շուկայական պայմաններում, ինչպես օրինակ՝ հանրության վերաբերմունքի փոփոխությունը պահանջների ներկայացման հանդեպ, տնտեսական իրավիճակի փոփոխություն, ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կառուցվածքը, պոլիսների պայմանները, հայցերի կարգավորման ընթացակարգերը:

Հետագա դատողությունները օգտագործվում են որոշելու համար, թե որքանով կարող են արտաքին գործոնները, ինչպիսիք են դատական վճիռները, օրենսդրական դաշտը, ազդել գնահատումների վրա:

Ենթադրությունների վստահելիության վրա ազդող այլ կարևոր հանգամանքները ներառում են տոկոսադրույքները, վճարման ժամկետների երկարաձգումները և փոփոխությունները արտարժույթի փոխարժեքներում:

Այնուամենայնիվ, կապված ՀՀ-ում համեմատաբար նոր ապահովագրական շուկայի հետ, դժվար է կանխատեսել որևէ պահանջի հավանական արդյունքը և ներկայացված պահանջների վերջնական արժեքը: Վնասի վերջնական արժեքի վրա ազդող գործոններից շատերի ազդեցությունը դժվար է որոշել: Այդ պատճառով, Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է վիճակագրական տվյալները, շուկայական փոփոխությունները և այլ գործոններ, պահուստների ավելի զգուշավոր գնահատման համար:

34.2 Վարկային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորությունը չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Հիմնական ոլորտները, որտեղ Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի, հետևյալն են՝

- Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ և բանկային հաշիվներ
- Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ
- Ապահովագրության գծով պարտավորություններում վերաապահովագրողի մաս
- Վերաապահովագրողների նկատմամբ պահանջներ արդեն վճարված հայցերի գծով
- Ապահովադիրների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության միջնորդների նկատմամբ պահանջներ

Վարկային ռիսկի հետագա բացահայտումներում չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

33.2.1 Վարկային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներ:

33.2.2 Վարկային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Վարկանիշներ

Ստորև ներկայացված աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն Ընկերության վարկային ռիսկի չափի վերաբերյալ 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ դասակարգելով ակտիվները համաձայն գործընկեր կողմի վարկանիշների: AAA ամենաբարձր հնարավոր վարկանիշն է.

Հազար ՀՀ դրամ	AAA	AA	A	BBB	B Չվարկանշված	Ընդամենը
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	-	-	-	- 1,785,869	**1,785,869**
Վերաապահովագրության գծով ակտիվներ	-	-	-	-	- 3,752,072	**3,752,072**
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	-	-	-	-	-	
Առևտրային արժեթղթեր	-	-	-	-	- 6,619,774	**6,619,774**
Բանկային հաշիվներ	-	-	-	-	- 2,816,899	**2,816,899**
2019թ. սեպտեմբերի 30- ի դրությամբ						

33.2.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կառավարում, սահմանում և վերահսկում է վարկային ռիսկի սահմանաչափերն այն ժամանակ, երբ դրանք սահմանվում են:

Ընկերությունն ունի վարկային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար վարկային ռիսկ: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Վերաապահովագրությունն օգտագործվում է ապահովագրության ռիսկը կառավարելու նպատակով: Այնուամենայնիվ, սա չի ազատում Ընկերությանը իր հիմնական ապահովագրային պարտավորությունից: Եթե վերաապահովագրողը որևէ պատճառով չի կատարում պահանջի վճարում, ապա Ընկերությունը պարտավորվում է վճարել ապահովադիրին: Վերաապահովագրությունը կատարվում է այն գործընկեր կողմերի հետ, որոնք ունեն դրական վարկային գնահատական, իսկ ռիսկի սահմանաչափից հնարավոր է խուսափել, հետևելով գործընկեր կողմերի սահմանափակումներին վերաբերող քաղաքականության ուղեցույցին, որը սահմանվում է ամեն տարի Խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման: Վերաապահովագրողների վարկունակությունը հաշվի է առնվում տարեկան կտրվածքով վերանայելով ֆինանսական կայունությունը՝ պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց առաջ:

33.2.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, գործընկեր կողմերի հետ դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Ժամկետանց, բայց չարժեզրկված ակտիվներ

30.09.2019թ. և 30.09.2018թ. դրությամբ Ընկերությունը չի ունեցել ժամկետանց, բայց չարժեզրկված ակտիվներ:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Որպեսզի ակտիվները դասակարգվեն որպես ժամկետանց կամ արժեզրկված, պայմանագրով սահմանված վճարումները պետք է կատարվեն 90 օրվա ընթացքում: Ժամկետանց կամ արժեզրկված ակտիվների համար գրավային ապահովածություն չի նախատեսվում:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ անհատապես արժեզրկված ապահովագրական և այլ դեբիտորական պարտքը կազմում է 253,441 հազար դրամ: Նշված ակտիվների համար ձևավորվել է պահուստ՝ 46,598 հազար դրամ գումարով:

34.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:
Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

34.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Ընկերությունն ունի նաև ապահով վարկային

գծեր, որ կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

35 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և վճարունակության պահանջվող մեծության ու ռիսկով կշռված ակտիվների մեծության հանրագումարի միջև սահմանային հարաբերակցությունը սահմանվում է 100%

2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընդհանուր կապիտալը, ռիսկով կշռված ակտիվները, վճարունակության պահանջվող մեծությունը և կապիտալի համարժեքության դրույքաչափի հաշվարկը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018
Հիմնական կապիտալ	6,224,117	6,016,378
Լրացուցիչ կապիտալ	0	0
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**6,224,117**	**6,016,378**
Ռիսկով կշռված ակտիվներ	1,262,265	1,152,463
Վճարունակության պահանջվող մեծություն	2,356,613	2,108,966
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.2 նորմատիվ)	**150%**	**167%**

Հազար ՀՀ դրամ	30.09.2019	30.09.2018

2011թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,500,000 ՀՀ դրամ գումարով: